

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲԸԱՇԶԲ-13/11

ք. Երևան

13.09.2013 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության ««Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ»» պետական հիմնարկը (այսուհետև՝ Հիմնարկ), ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԱԶԱՆՏ-ԷՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և /տեղա ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվող/ աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.11.2013 թ. ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, վույերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

- 2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:
- 2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փոստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,
- բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),
- գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,
- դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

(Handwritten signatures and stamps)

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինման աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդամուխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հազարդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365-րդ օրացուցային օրը ներառյալ: Եթե

երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, այս Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

հարցի կարգավորման համար ձեռնարկում է նաև իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախազմանախառաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ազատ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մեթոմբ:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է անբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան տեղեկված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստազրույց է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, այս ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, այս արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամիջոց վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառու:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերքական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի զինք վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. Աշխատանքի զինք և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր զինք կազմում է 910729426 (Ինը հարյուր տասը միլիոն յոթ հարյուր քսանինը հազար չորս հարյուր քսանվեց) ՀՀ դրամ, որից 151788238 (Հարյուր հիսուսմեկ միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Կապալառուի կողմից N1 հավելվածով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 6248605 (Վեց միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր հինգ) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), որից 1041434 (Մեկ միլիոն քառասունմեկ հազար չորս հարյուր երեսուսուցորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրի յուրմյուս է. եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

5.1.2 Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար:

5.2 Աշխատանքի զինք կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ զինք:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (լսնայություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), թայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասերորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագրի ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության ամկալության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սովյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սովյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով ետխատեսված Աշխատանքի շուկայական գների սվելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.6 Սույն պայմանագիրը կնքվում ընդհանուր՝ 910729426 (Ինը հարյուր տասը միլիոն յոթ հարյուր քսանինը հազար չորս հարյուր քսանվեց) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար սովյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որանք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին սովյալում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<ՔՕԻԳ>> ՊՀ

ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
ժկատավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011087153, ՀՎՀՀ 02553861

Կապալատու

<<ԲԱՉԱՆԻՄ>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Միսիան,
Արցախի 8,
<<Արարատ Բանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1510013520700100,
ՀՎՀՀ 09811321

Տնօրեն 2. Ստորագրում



Տնօրեն Գ. Հովակիմյան



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման
 աշխատանքների կատարման**

N ը/վ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	ԿՏԵ-160/10, 160ԿՎԱ, 10/0.4 ԿՎ	4087871	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	30.11.2013 թ.
2	Արտաքին ջրամատակարարում	2160734	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	30.11.2013 թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		6248605	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	30.11.2013 թ.

**Պ ա տ վ ի ր ա տ ու
 ՀՀ ՔՆ <<ԲՕԻԳ>> ՊՀ**

ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Ժկատավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործարևակական վարչություն
 ՀՀ 900011087153, Հ-ԼՀՀ 02553861

Կապալառու

<<ԲԱՁԱՍ-ԷՄ>> ՍՊԸ
 ՀՀ Սյունիքի մարզ ք. Սիսիան,
 Արցախի 8,
 <<Արարատ Բանկ>> ԲԲԸ
 Հ/Հ 1510013520700100,
 ՀՎՀՀ 09811321

Տնօրեն **Զ. Սարգսյան**



Տնօրեն **Գ. Հովսեփյան**



(Handwritten signature)

Հավելված թիվ 3
 13.09.2013 թ. կնքված աշխատանքների
 հատարման N ԲԸԱԵԶԲ-13/11
 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն» դրամ

Գնման առարկան	Նախատեսվում է ֆինանսավորել 2013 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
ՀՀ Գոտալքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	6248605	6248605	6248605	6248605

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են անողական կարգով

Պ ա տ վ ի ը ա տ ու
ՀՀ ՔՆ «ՔՕՏԻԳ» ՊՀ

ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 մկառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՀ 900011087153, ՀՎՀՀ 02553861

Կապալատու

«FIDUIS-EU» ՍՊԸ
 ՀՀ Սյունիքի մարզ ք. Մխիթան,
 Արցախի 8,
 «Արարատ Բանկ» ԲԲԸ
 Հ/Հ 1510013520700100,
 ՀՎՀՀ 09811321

Տնօրեն Սարգսյան



Տնօրեն Գ. Հովակիմյան



Կատարող

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< ____ >> << ____ >> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << ____ >> << ____ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Կատարողը՝ _____

դեմս _____, _____ և

ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20__թ-ից _____ 20__թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքն ըի կատարման ժամկետը	Վճարման նկատմամբ գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Գ.Տ.

Ազգանուն, Անուն
Գ.Տ.



«ԲԱՉԱՆ-ԷՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակզմանի տահանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է **ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի** (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզապարոցի /Նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների** ձեռքբերման «ԲՆԱՇՁԲ-ԲԸԱՇՁԲ-13/11» ծանկագրով բաց ընթացակարգին՝ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը ստանձնում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզապարոցի /Նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների ձեռքբերման N ԲԸԱՇՁԲ-13/11 գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ երաժարվելու դեպքում Ընկերությանը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ 91072943 (Ենասուտեկ միլիոն յոթասուտեկու երկու հարյուր ինը հարյուր քառասուներեք) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ առանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, սրանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի ստանձնման, Ընկերությանը սպասարկող «Արարատ Բանկ» ԲԲԸ կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «ԲԱՉԱՆ-ԷՍ» ՍՊԸ-ն հանձնարարում է «Արարատ Բանկ» ԲԲԸ -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և ինտագրալ պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպա (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

1.1.4 2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 2015 թ.փետրվարի 10-ը ներառյալ:

1.1.5 2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

1.1.6 2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«ԲԱՉԱՆ-ԷՍ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Արցախի 8,
«Արարատ Բանկ» ԲԲԸ,
2/2 1510013520700100, ՀՎՀՀ 09811321

տնօրեն՝

Գ. Հովակիմյան



գլխ. Հաշվապահ

Լ. Օհանյան

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ /2013/

ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադարձրոցի
 (նոր մասնաշենք) կառուցման

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
I	II	III	IV	V	VI
					3,096,872
1	Բարձր լարման գծին միացման ստանդարտ վճար	հատ	1.00	125,000	125,000
2	Կոմպլեկտ տրանսֆորմատորային ենթակայան, հզորությունը 160կՎԱ, լարումը 10/0.4կՎ	կոմպլ.	1.00	145,000	145,000
3	ԿՏԵ-160կՎԱ-ի արժեքը	հատ	1.00	1,200,000	1,200,000
4	Ուժային տրանսֆորմատորի TM-160/10, 10/0.4 կՎ, 160 կՎԱ արժեքը	հատ	1.00	800,000	800,000
5	Յուղի արժեքը	լ	400.00	1,000	400,000
6	Բաժանիչ ՔԱԿԱ-10/250, ՈՐԿ3-10Մ շարժարեղով	հատ	1.00	9,500	9,500
7	Ավտոմատ անջատիչ, 250Ա	հատ	1.00	23,500	23,500
8	Էլեկտրական եռաֆազ հաշվիչ 380Վ, 5Ա	հատ	1.00	23,500	23,500
9	Հոսանքի տրանսֆորմատոր TK-20, 200/5Ա	հատ	3.00	55,000	165,000
10	Մետաղական արկղ հաշվիչի տեղադրման համար	հատ	1.00	14,000	14,000
11	Մետաղական հենարաններ անկյունակային պողպատից	կգ	97.68	400	39,072
12	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	100մ ²	0.025	150,000	3,750
13	Բետոնե հիմքերի կառուցում B12.5, F150, W4 դասի բետոնով	մ ³	0.31	40,000	12,400
14	Բետոնե նախապատրաստական շերտի կառուցում B7.5 դասի բետոնով	մ ³	0.56	30,000	16,800
15	Միաձույլ ե/ր սալի կառուցում B15, F150, W4 դասի բետոնով հիմքերի տակ	մ ³	0.17	35,000	5,950
16	Ամրան A III դասի	կգ	24.000	350	8,400
17	Հողանցվող շերտապողպատ 40x4մմ	մ	30.00	1,500	45,000
18	Պողպատ անկյունային 50x50x5մմ, L=2.5մ	հատ	6.00	1,500	9,000
19	Փոսորակի մշակում հիմքերի համար	մ ³	1.20	2,500	3,000
20	Խրամուղու մշակում հողանցման համար	մ ³	9.00	2,500	22,500
21	Գրունտի ետլիցք	մ ³	9.10	2,500	22,750
22	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ ³	1.10	2,500	2,750
XXXIX.Արտաքին ջրամատակարարում և ջրահեռացում					1,636,920
5	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտ	մ ³	75.00	5,200	390,000

8	Կոյուղու կլոր հորերի պատրաստում ե/ք հավաքովի էլեմենտներից D=1.0մ	մ ³	1.29	60,000	77,400
11	Մետաղական տարրերի տեղադրում սեյսմակայունության համար	տ	0.0093	400,000	3,720
13	Թուջե մտոցի տեղադրում T տիպի d=700մմ	հատ	1.00	50,000	50,000
14	Խրամուղու հետլիցք ձեռքով, տոփամեղով	մ ³	55.00	2,500	137,500
15	Խրամուղու հետլիցք բուլդոզերով	1000մ ³	0.400	800,000	320,000
16	Ավելացած գրունտի բարձում և տեղափոխում 5 կմ	մ ³	52.00	2,500	130,000
17	Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակների մոնտաժում Փ57x3.5, նորմալ հակակոռոզիոն հիդրոնեկուսացումով, փորձարկումով	մ	95.00	5,200	494,000
23	Պողպատե անկյուն DN50, α=90°	կգ	3.00	2,500	7,500
23	Պողպատե անկյուն DN50, α=45°	կգ	1.20	2,500	3,000
26	Մետաղական տարրերի տեղադրում հորում սեյսմակայունության համար	տմ	0.035	680,000	23,800

Ընդամենը 4,733,792
Շահույթ-10 % 473,379
Ընդամենը 5,207,171
Ա.Ա.Հ 20% 1,041,434
Ընդամենը 6,248,605

Պ ա տ վ ի թ ա տ ու
ՀՀ ՔՆ <<ՔՄԻԳ>> ՊՀ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Ճկառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՀ 900011087153, ՀՎՀՀ 02553861

Կապալառու
<<ԲԱԶՍԼՏ-ԷՄ >> ՍՊԸ
 ՀՀ Սյունիքի մարզ, ք. Միսիան,
 Արցախի 8,
 <<Արարատ Բանկ>> ԲԲԸ
 Հ/Հ 1510013520700100,
 ՀՎՀՀ 09811321

Տնօրեն Հ. Վարդյան



Տնօրեն Գ. Հովակիմյան



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ /ընդհանուր/
 ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի
 (նոր մասնաշենք) կառուցման**

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
I	II	III	IV	V	VI
	Համառոտագրարական աշխատանքներ I մասնաշենք				316,537,243
	1. Հողային աշխատանքներ				1,684,092
8	Գրունտի լիցք հատակների տակ	մ ³	743	1,500	1,114,500
9	Գրունտի տոփանում օդաճնշիչ եղանակով	մ ³	711.99	800	569,592
	2. Հիմք և որմնախարիսխ				60,890,662
11	Միաձույլ ե/բետոնե հիմքի սալի կառուցում B20 դասի բետոնով	մ ³	396.60	50,000	19,830,000
12	Ամրան A I դասի	տ	1.82	400,000	728,000
13	Ամրան A III դասի	տ	25.44	350,000	8,904,000
14	Միաձույլ ե/բետոնե հիմքերի կառուցում B20 դասի բետոնով Հ1-Հ13	մ ³	45.97	50,000	2,298,500
15	Ամրան A III դասի	տ	8.27	350,000	2,894,500
16	Ամրան A I դասի	տ	2.02	400,000	808,000
17	Ե/բետոնե հիմնային հեծանների կառուցում B20 դասի բետոնով	մ ³	242.00	50,000	12,100,000
18	Ամրան A III դասի	տ	29.20	350,000	10,220,000
19	Ամրան A I դասի	տ	0.40	400,000	160,000
20	Որմնախարիսխի երեսապատում բազալտե քարերով	մ ²	116.80	12,500	1,460,000
21	Որմնախարիսխի պատերի երեսապատում ե/բետոնե սյուների վրա 50սմ հաստությամբ բազալտե սալիկներով	մ ²	17.80	13,500	240,300
22	Մետաղական ցանցի տեղադրում երեսապատման համար Փ5Եթ-1	մ ²	17.8	1,200	21,360
23	Մետաղական ցանցի արժեքը	տ	0.03	420,000	11,513
24	Պատերի հորիզոնական հիդրոմեկուսացում ցեմենտավազային շաղախով՝ ավելացնելով հեղուկ ապակի	մ ²	89.60	4,200	376,320
25	Միաձույլ ե/բետոնյա բարավորների և կամարի կառուցում B15 մակնիշի բետոնով	մ ³	0.07	50,000	3,500
26	Ամրան A I դասի	կգ	1.15	400	460
27	Փոստրակի պատերի կառուցում B10 դասի բետոնով	մ ³	0.83	35,000	29,050

28	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի կառուցում B15 դասի բետոնով	մ ³	0.25	50,000	12,500
29	Ամրան A I դասի	տ	0.015	400,000	6,000
30	Փայտյա կափարիչի տեղադրում 0.8x0.8 չափի	մ ²	0.920	5,200	4,784
31	Կափարիչի բռնակ	հատ	1.00	2,500	2,500
32	Կափարիչի յուղաներկում 2 անգամ	մ ²	1.50	2,500	3,750
33	Փայտյա չորսու	մ ³	0.019	125,000	2,375
34	Հավաքովի ե/բետոնե վաքերի և սալերի տեղադրում	մ ³	12.00	50,000	600,000
35	Ամրան A I դասի	տ	0.07	400,000	28,000
36	Ամրան A III դասի	տ	0.415	350,000	145,250
	Դրսի աստիճաններ և հարթակ				925,350
37	Բետոնե հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ ³	3.80	35,000	133,000
38	Բետոնե պատերի կառուցում 400մմ հաստության B12,5 դասի բետոնով	մ ³	5.30	35,000	185,500
39	Բետոնե աստիճանների կառուցում B10 դասի բետոնով	մ ³	2.20	50,000	110,000
40	Աստիճանների պատերի երեսապատում բազալտե սրբառաջ բարերով	մ ²	8.90	12,500	111,250
41	Աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ ²	5.0	12,500	62,500
42	Գլխադիրի տեղադրում պատերի վրա բազալտե սալիկներով d=150մմ	մ ²	11.70	15,500	181,350
43	Բազալտե աստիճանների կառուցում	մ	13.50	10,500	141,750
	Պատեր				44,058,780
44	Միաձույլ ե/բետոնե միջնասյուների կառուցում B15 դասի բետոնով	մ ³	39.74	40,000	1,589,600
45	Ամրան A III դասի	տ	1.89	350,000	661,500
46	Ամրան A I դասի	տ	0.831	400,000	332,400
47	Միաձույլ ե/բետոնե սյուների և կանգնակների կառուցում B25 դասի բետոնով	մ ³	95.87	50,000	4,793,500
48	Ամրան A III դասի	տ	14.36	350,000	5,026,000
49	Ամրան A I դասի	տ	5.23	400,000	2,092,000
50	Ներդիր տարրեր	տ	0.596	420,000	250,320
51	Միաձույլ ե/բետոնե գոտիների կառուցում B15 դասի բետոնով	մ ³	25.72	50,000	1,286,000
52	Ամրան A III դասի	տ	1.176	350,000	411,600
53	Ամրան A I դասի	տ	0.538	400,000	215,200
54	Միաձույլ ե/բետոնե բարավորների կառուցում B15 մակնիշի բետոնով	մ ³	2.30	50,000	115,000
55	Ամրան A III դասի	տ	0.08	350,000	28,000
56	Ամրան A I դասի	տ	0.06	400,000	24,000
57	Միաձույլ ե/բետոնե շրջանակների պարզունակների կառուցում B25 դասի բետոնով	մ ³	157.20	50,000	7,860,000
58	Ամրան A III դասի	տ	17.720	350,000	6,202,000
59	Ամրան A I դասի	տ	8.01	400,000	3,204,000
60	Ներդիր տարրեր	տ	0.446	420,000	187,320
61	Միաձույլ ե/բետոնե պատերի կառուցում B15 դասի բետոնով 200մմ հաստությամբ	մ ³	63.56	50,000	3,178,000
62	Ամրան A I դասի	տ	1.08	400,000	432,000
63	Ամրան A III դասի	տ	4.178	350,000	1,462,300

64	Ներդիր տարրեր	տ	0.04	420,000	16,800
65	Պատերի կառուցում 40սմ հաստ, կանոնավոր կրթիկ տուֆ քարերով	մ ³	115.8	24,000	2,779,200
66	Պատերի միջնող դետալներ ՄԴ	տ	0.048	420,000	20,160
67	Պատերի ճկուն միացում մետաղական ցանցերով Փ3 BP-I	տ	0.226	420,000	94,920
68	Պատերի ամրանավորում մետաղական ցանցերով	տ	0.288	420,000	120,960
69	Պատերի ճկուն միացում պոլիստիրոլով	մ	455.0	2,200	1,001,000
70	Բետոնե բարձիկների կառուցում B10 դասի բետոնով	մ ³	22.50	30,000	675,000
	Ծածկ				14,501,000
71	Հավաքովի ե/բետոնե ծածկի սալերի տեղադրում մինչև 10մ ² մակերեսով	հատ	96.00	5,000	480,000
72	Ծածկի սալի արժեքը ամրանով	մ ²	683.30	7,500	5,124,750
73	Սիւնայի ե/բետոնե ծածկի սալերի կառուցում B15 դասի բետոնով	մ ³	11.82	50,000	591,000
74	Ամրան A I դասի	տ	0.512	400,000	204,800
75	Ե/բետոնե հեծանների կառուցում B15 դասի բետոնով	մ ³	22.11	50,000	1,105,500
76	Ե/բետոնե հեծանների կառուցում B25 դասի բետոնով	մ ³	5.57	50,000	278,500
77	Ամրան A III դասի	տ	3.66	350,000	1,281,000
78	Ամրան A I դասի	տ	0.913	400,000	365,200
79	Ներդիր տարրեր	տ	0.127	420,000	53,340
80	Օղափոխության բլոկների կառուցում B12.5 դասի բետոնով	մ ³	3.00	50,000	150,000
81	Ամրան A I դասի	տ	0.04	400,000	16,000
82	Ամրան A III դասի	տ	0.184	350,000	64,400
83	Սիւնայի ե/բետոնե գոտիների կառուցում B12,5 դասի բետոնով	մ ³	0.50	45,000	22,500
84	Ամրան A I դասի	տ	0.011	400,000	4,400
85	Ամրան A III դասի	տ	0.078	350,000	27,300
86	Բազրիքների բետոնացում B10 դասի բետոնով	մ ³	1.50	35,000	52,500
87	Ներդիր տարրեր ՆԴ-2	տ	0.053	420,000	22,260
88	Հանգույցների իրականացում B15 դասի բետոնով	մ ³	0.277	50,000	13,850
89	Ամրան A I դասի	տ	0.007	400,000	2,800
90	Սիւնայի ե/բետոնե միջուկների կառուցում B12,5 մակնիշի բետոնով	մ ³	0.40	50,000	20,000
91	Ամրան A III դասի	տ	0.046	350,000	16,100
92	Ամրան A I դասի	տ	0.052	400,000	20,800
93	Ծածկի պատրաստում պրոֆիլավոր պողպատյա թիթեղով (профнастил) H75-750-0.7	100մ ²	7.64	450,000	3,438,000
94	Ծածկի պրոֆիլավոր պողպատյա թիթեղի յուղաներկում 2 անգամ	100մ ²	7.64	150,000	1,146,000
	Մետաղական կոնստրուկցիաներ				57,101,300
95	Մետաղական ֆերմաների պատրաստում և տեղադրում մինչև 25մ բարձրության մինչև 24մ թռիչքով քաշը մինչև 3 տոննա	տ	17.44	680,000	11,859,200

96	Մետաղական մարդակների (ծալա) տեղադրում	տ	10.93	680,000	7,432,400
97	Մետաղական ձգանների ուղղաձիգ և հորիզոնական կապերի ու գոտիների տեղադրում ու մոնտաժում	տ	39.84	680,000	27,091,200
98	Մետաղական կանգնակների տեղադրում և մոնտաժում	տ	10.55	680,000	7,174,000
99	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում 2 անգամ	100մ ²	23.63	150,000	3,544,500
	Տանիք (I մասնաշենք և անցում)				31,807,440
100	Տանիքի փայտե կոնստրուկցիաների կառուցում II տեսակի փշատերև սղոցված փայտանյութով	մ ³	47.77	120,000	5,732,400
101	Տանիքի պատուհանի տեղադրում (փայտի ծախս-0.235մ ³)	հատ	2.00	40,000	80,000
102	Տանիքի պատուհանի տեղադրում (փայտի ծախս-0.434մ ³)	հատ	4.00	80,000	240,000
103	Տանիքի մետաղական տարրերի տեղադրում	տ	0.44	420,000	184,800
104	Չեղմահարկի փայտյա տարրերի հրապաշտպանություն	մ ³	50.0	12,000	600,000
105	Կավարամածի փայտյա տարրերի հրապաշտպանություն	100մ ²	12.90	80,000	1,032,000
106	Տանիքի ճոռերի պատրաստում ներկած ցինկապատ թիթեղից d=0,55մմ հաստ, ծածկելով ճակատային մասերը	գ.մ	126.00	3,500	441,000
107	Թիթեղյա ծածկի պատրաստում ցինկապատ ներկած մետաղակղմինդրով d=0.55մմ կավարամածի հետ միասին	100մ ²	14.20	550,000	7,810,000
108	Կավարամածի արժեքը	մ ³	10.38	115,000	1,193,700
109	Տանիքի հարթ թիթեղապատում ներկած ցինկապատ թիթեղով 0,55մմ հաստությամբ(տանիքի պատուհանի, պիպավահանի համար)	մ ²	54.60	4,500	245,700
110	Չրթող խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից d=0,55	մ	70.20	2,500	175,500
111	Չազարների տեղադրում ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	հատ	9.00	5,000	45,000
112	Տանիքի մետաղական ճաղաշարերի տեղադրում	գմ	126.0	3,200	403,200
113	Մետաղական ճաղաշարի յուղաներկում 2 անգամ	մ ²	78.00	2,000	156,000
114	Ցեմենտ-ավազային հարթեցմող շերտի պատրաստում h=30մմ	մ ²	538.0	2,500	1,345,000
115	Գոլորշամեկուսացում 1-շերտ հիդրոիզոլ բիտումի տաք մածիկի վրա	մ ²	538.0	2,000	1,076,000
116	Տանիքի ջերմամեկուսացում Կարմրաշենի խարանով h=15սմ	մ ³	80.70	9,200	742,440
117	Տանիքի ջերմամեկուսացում գնդիկավոր փքապեղիտով h=12սմ+ 0,026սմ	մ ³	112.50	50,000	5,625,000
118	Ամրանավորված մանրախիճ բետոնի շերտի հրականացում B15 դասի թեթև բետոնով	մ ³	30.60	35,000	1,071,000
119	Ամրան Փ3 Եթ-1 դասի	տ	0.428	400,000	171,200

120	Կարանների լցնում հերմետիկ մածուկով ալիքավոր և հարթ քիթեղների միացման տեղում	100մ ²	13.75	250,000	3,437,500
Հովար (2 հատ)					113,907
121	Մուտքի հովարի միաձույլ ե/բետոնե հեծանների, սալի և պատի կառուցում B15 դասի բետոնով	մ ³	0.67	50,000	33,500
122	Ամրան AI դասի	կգ	5.00	400	2,000
123	Ամրան AIII դասի	կգ	72.00	380	27,360
124	Փայտյա կոնստրուկցիաների կառուցում II տեսակի, փշատերև՝ սղոցված փայտանյութով	մ ³	0.055	120,000	6,720
125	Հովարի ծածկում ներկած հարթ ցիմկապատ քիթեղով 0.55մմ հաստության	մ ²	5.0	6,500	32,500
126	Փայտյա կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ ³	0.056	1,200	67
127	Մետաղական տարրերի տեղադրում	տ	0.028	420,000	11,760
Միջնորմներ					4,870,830
128	Միջնորմների կառուցում h=200մմ խարամաբետոնե բլոկներով	մ ³	188.20	18,500	3,481,700
129	Միջնորմների կառուցում մինչև 100մմ հաստության խարամաբետոնե սալերով (ցեմենտավազային շաղախով)	մ ²	56.90	4,200	238,980
130	Ներդիր տարրերի տեղադրում միջնորմների համար	տմ	0.425	420,000	178,500
131	Մետաղական ամրանների տեղադրում նոր կառուցվող միջնորմների սեյսմիկ ամրացման համար	տ	0.791	350,000	276,850
132	Պատերի ճկուն միացում պոլիստիրոլով	մ	400.0	1,500	600,000
133	Բետոնե զոտու պատրաստում պաշգամբի խարամաբետոնի վրա	մ ³	1.50	45,000	67,500
134	Ներդիր տարրեր պաշգամբի բազրիքների համար	տ	0.065	420,000	27,300
Ներքին աստիճաններ					4,751,390
134	Բետոնե աստիճանների կառուցում B10 դասի բետոնով	մ ³	2.30	40,000	92,000
135	Միաձույլ ե/բետոնե սանդուղքների կառուցում B20 դասի բետոնով	մ ³	3.08	50,000	154,000
136	Ամրան A III դասի	տ	0.479	350,000	167,650
137	Ամրան A I դասի	տ	0.098	400,000	39,200
138	Ներդիր տարրեր	տ	0.019	420,000	7,980
139	Մետաղական բազրիքի տեղադրում	տ	1.731	420,000	727,020
140	Բազրիքների բետոնե հիմքերի կառուցում B12.5 դասի բետոնով	մ ³	0.648	40,000	25,920
141	Լաքապատված փայտե բռնածողի տեղադրում	մ	31.80	2,500	79,500
142	Աստիճանների բազրիքների յուղաներկում 2 անգամ	մ ²	51.00	2,500	127,500
143	Գլխավոր մուտքի և ներսի աստիճանների և հարթակների երեսապատում մարմարե սալիկներով 30մմ հաստության	մ ²	62.00	45,000	2,790,000

144	Շրիշակների տեղադրում 10սմ բարձրության մարմարե սալիկներով	մ ²	6.70	45,000	301,500
145	Տանիքի աստիճանները երեսապատել արհեստական պրեսգրամիտե սալիկներով	մ ²	22.00	9,800	215,600
146	Շրիշակների տեղադրում արհեստական պրեսգրամիտե սալիկներով	մ ²	2.40	9,800	23,520
	Դռներ				9,268,620
147	Արտաքին պլումինե դռների տեղադրում քարե պատերի մեջ (սպիտակ,60մմ ջերմակամուրջով,4+4 մմ թուրջական պրոֆիլ), ապակե փաթեթով, բացվող	մ ²	33.39	50,000	1,669,500
148	Արտաքին պլումինե դռների տեղադրում քարե պատերի մեջ (սպիտակ,60մմ ջերմակամուրջով,4+4 մմ թուրջական պրոֆիլ), ապակե փաթեթով, չբացվող	մ ²	23.64	48,000	1,134,720
149	Ներքին մետաղապլաստե դռների տեղադրում (թուրջական պրոֆիլ 60մմ հաստության), 1 տակ ապակի, բացվող	մ ²	114.12	30,000	3,423,600
150	Ներքին պլումինե դռների տեղադրում (սպիտակ, թուրջական պրոֆիլ 46մմ հաստության), 1 տակ ապակի, բացվող	մ ²	86.88	35,000	3,040,800
	Պատուհաններ				7,108,200
151	Ալյումինե պատուհանների տեղադրում (60մմ ջերմակամուրջով,թուրջական պրոֆիլ), ապակե փաթեթով, բացվող	մ ²	86.52	40,000	3,460,800
152	Ալյումինե պատուհանների տեղադրում (60մմ ջերմակամուրջով,թուրջական պրոֆիլ), ապակե փաթեթով, չբացվող	մ ²	41.40	35,000	1,449,000
153	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում 60 մմ հաստությամբ, ապակեփաթեթով,չբացվող	մ ²	42.12	30,000	1,263,600
154	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում 60 մմ հաստությամբ, միատակ,չբացվող	մ ²	7.20	30,000	216,000
155	Տանիքի պլումինե պատուհանի տեղադրում, 1 տակ ապակի, չբացվող	մ ²	1.20	40,000	48,000
156	Տանիքի մետաղապլաստե պատուհանի տեղադրում, 1 տակ ապակի, բացվող	մ ²	0.90	35,000	31,500
157	Տանիքի մետաղապլաստե պատուհանի տեղադրում, 1 տակ ապակի, չբացվող	մ ²	7.24	30,000	217,200
158	Պատուհանագոգերի տեղադրում մինչև 25սմ լայնության	զմ	120.60	3,500	422,100
	Հատակներ				38,935,470
159	Գրունտի տոփանում խճով	100մ ²	12.27	150,000	1,840,500
160	Բետոնե նախաշերտի կառուցում B7,5 դասի բետոնով	մ ³	122.0	35,000	4,270,000
161	Ե/բետոնյա նախաշերտի պատրաստում B12,5 դասի բետոնով (h=100մմ)	մ ³	122.0	40,000	4,880,000
162	Ամրան Փ4Bp-I	տ	1.207	400,000	482,800
163	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում բիտումի մաստիկա 2 շերտ	մ ²	1227.0	2,200	2,699,400
164	Խարամաբետոնե շերտի պատրաստում h=40մմ	մ ³	77.20	9,200	710,240

165	Ծեմենտավազային հարթեցնող d=20մմ շերտի պատրաստում հատակների տակ	100մ ²	17.65	150,000	2,647,500
166	Մանրատախտակե հատակի պատրաստում (հաճար) քիտումի մածիկի վրա	մ ²	326.8	5,500	1,797,400
167	Շրիշակների արժեքը 7սմ բարձրության	մ	349.68	1,500	524,520
168	Մանրատախտակե հատակի հղկում և լաքապատում 3 անգամ	մ ²	326.8	2,500	817,000
169	Մանրատախտակի շրիշակների լաքապատում 3 անգամ	մ ²	32.68	2,500	81,700
170	Արհեստական գրանիտից հատակների պատրաստում սունձի վրա	մ ²	498.00	9,800	4,880,400
171	Արհեստական գրանիտից շրիշակների պատրաստում	մ ²	53.30	9,800	522,340
172	Հատակների կառուցում բարձրորակ խեցեսալերով	մ ²	184.20	7,500	1,381,500
173	Հատակների պատրաստում ակոսավոր խեցեսալերով	մ ²	9.50	7,500	71,250
174	Ուրբերոիդ 1 շերտ	մ ²	8.60	2,200	18,920
175	Տավազերանի պատրաստում h=60մմ հաստության չորսուներով	100մ ²	7.46	650,000	4,849,000
176	Հատակների կառուցում փայտյա չորսուներից 70x60մմ չափերի, 7սմ բարձրությամբ շրիշակներով	մ ²	746.0	6,500	4,849,000
177	Հատակների մետաղական օդափոխության ճաղաշարերի տեղադրում	հատ	12.00	10,000	120,000
178	Փայտյա հատակների բարձրակ յուղանեկում 2 անգամ	մ ²	746.0	2,000	1,492,000
	Ներքին հարդարման աշխատանքներ				22,672,716
179	Պատերի բարձրորակ սվաղում գաջի շաղախով	100մ ²	30.05	280,000	8,414,000
180	Պատուհանների և դռների շեպերի սվաղումը գաջի շաղախով	100մ ²	0.89	300,000	267,000
181	Առաստաղների քահարթում գաջի շաղախով	100մ ²	9.45	200,000	1,890,000
182	Պատերի բարձրորակ սվաղում ցեմենտավազային շաղախով	մ ²	142.00	2,800	397,600
183	Պատերի բարձրորակ սվաղում ցեմենտավազային շաղախով հախճասալի տակ	մ ²	592.00	2,800	1,657,600
184	Պատերի բարձրորակ սվաղում ցեմենտավազային շաղախով շոգեբաղնիքի համար	մ ²	33.50	2,800	93,800
185	Պատերի և առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով ծեփամածիկի վրա	100մ ²	46.08	2,200	101,376
186	Կախովի առաստաղ պլաստիկ	մ ²	77.4	3,200	247,680
187	Կախովի առաստաղի պրոֆիլ	գմ	137.8	1,200	165,360
188	Առաստաղների երեսապատում գիպսակարտոնով	մ ²	427.0	7,500	3,202,500
189	Գիպսակարտոնի պրոֆիլ Մ	գմ	325.0	1,200	390,000
190	Գիպսակարտոնի պրոֆիլ Լ	գմ	369.0	1,200	442,800
191	Պատերի երեսապատում բարձրորակ հախճասալով, նախապես հարթեցված ցեմենտավազային բարձրորակ սվաղի վրա	մ ²	592.00	8,500	5,032,000
192	Ներքին փայտամածի կառուցում հարդարման աշխատանքների համար մարզադահլիճում, մինչև 10մ բարձրությամբ	100մ ²	7.42	50,000	371,000

Արտաքին հարդարում					16,385,425
